ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԳԵՏ-ԳՀԱՊՁԲ-15/1-17 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման նիստի

ք. Գյումրի *22 օգոստոսի 2017թ.*

Թամանյան 17ժամը 16:30

<<Գյումրու <<Երեխաների տուն>> ՊՈԱԿ

Գնման առարկա է հանդիսանում 2017թ-ին <<Գյումրու <<Երեխաների տուն>> ՊՈԱԿ կարիքների համար վառելիքի ձեռքբերումը:

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Է. Ալագյոզյան
հանձնաժողովի անդամներ՝ Մ. Հարությունյան, Զ. Գալոյան
հանձնաժողովի քարտուղար՝ Պ. Վալեսյան:

1. Հայտեր են ներկայացրել.

ա/ <<Մաքսիուր>> ՍՊԸ-ն, ք. Երևան, Տպագրիչների 8, հեռ. 010-52-67-51,
բ/ <<Սիփիէս օիլ քորփորեյշն>> ՍՊԸ-ն, ք. Երևան, Պուշկինի 1, հեռ. 010-54-09-11, 010-52-67-46
Հրավերը (ծանուցումը) 15.08.2017թ-ին հրապարակվել է տեղեկագրում: Հայտեր ներկայացրել են վերոնշյալ 2 մասնակիցները:

2. Հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ծրարները կազմվել և ներկայացվել են սահմանված կարգի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում կողմ 3, դեմ 0:

3. Հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների հայտերում առկա են պահանջվող բոլոր փաստաթղթերը: Մասնավորապես՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը,
բ. իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,
գ. գնային առաջարկ,
դ. հայտի ապահովում,
զ. իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),
է. հայտարարություն՝ գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին,
ը. հայտարարություն՝ տվյալ գնման գործընթացում իրեն, սույն կարգով սահմանված փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.
թ. այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավելի, քան տասը տոկոսը՝ ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն պարբերության մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում են գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները:

Ընդունվել է որոշում կողմ 3, դեմ 0:

4. Հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների կողմից փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում կողմ 3, դեմ 0:

5. Մասնակիցները առաջարկել են պայմանագրի կատարման հետևյալ գները՝

դրամ

N	Վառելիքի անվանումը	<<Մաքսիուր>> ՍՊԸ		<< Սիփիէս օիլ քորփորեյշն >> ՍՊԸ	
		Գինն ԱԱՀ-ով	Գինն առանց ԱԱՀ	Գինն ԱԱՀ-ով	Գինն առանց ԱԱՀ
1	Բենզին ռեգուլյար	509700	424750	525000	437500
2	Դիզելային վառելիք	158900	158900	170000	170000

6. Հայտերի բացման նիստում, գնահատող հանձնաժողովի կողմից կողմ՝ 3, դեմ՝ 0 ձայների հարաբերությամբ՝

1) թիվ 1-ին և 2-րդ, չափաբաժիններով առաջին տեղ է զբաղեցրել <<Մաքսիուր>> ՍՊԸ ն,

Ընդունվել է որոշում կողմ 3, դեմ 0:

Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները որոշվել են նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով (գները համեմատվել են առանց ԱԱՀ-ի): Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները կճանաչվեն համապատասխան չափաբաժինների հաղթողներ, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին ներկայացվող հարցման դրական պատասխանի դեպքում:

7. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում 5 /հինգ/ օրացուցային օր: Պայմանագրերը պատվիրատուի կողմից հաղթող ճանաչված մասնակիցների հետ կնքվելու են <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո՝ հինգ օրացուցային օրվա ընթացքում պայմանագրի կատարման ապահովում ներկայացնելու դեպքում:

Ընդունվել է որոշում կողմ 3, դեմ 0:

8. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 28.08.2017 թվականին ժամը 12:00, Թամանյան 17 հասցեում, ընտրված մասնակիցներին որոշելու համար:

Ընդունվել է որոշում կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

Նախագահ _____ Է. Ալագյոզյան

անդամներ՝ _____ Ա. Հովսեփյան

_____ Մ. Բեգջանյան

քարտուղար _____ Պ. Վալեսյան: